ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողով հրավիրելու մասին

17.11.2026 14:03

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Ձեզ ծանուցվում եք այն մասին, որ **2026 թվականի դեկտեմբերի 19-ին (շաբաթ օրը) հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.**

- ***ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրություն,***
- ***Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխությունների և լրացումների կատարում:***

Ընդհանուր ժողովը տեղի է ունենալու հետևյալ վայրերում՝

- ***Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում (Կենտրոնական տեղամաս): Կենտրոնական տեղամասն ընդգրկում է՝ Երևան քաղաքը և Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի մարզերը,***
- ***Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մյասնիկյան 6/37 հասցեում (Հյուսիսային տեղամաս): Հյուսիսային տեղամասն ընդգրկում է Լոռիի, Շիրակի, Տավուշի մարզերը,***
- ***Սյունիքի մարզ, ք. Կապան, Արամ Մանուկյան 1ա/19 հասցեում (Հարավային տեղամաս): Հարավային տեղամասն ընդգրկում է Սյունիքի մարզը:***

1. Օրակարգային հարցերով **<u>քվեարկությունը</u>** սկսվում է **2026 թվականի դեկտեմբերի 19-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 20^{00}-ին**:
2. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների **<u>թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)</u>** սկսվում է **2026 թվականի նոյեմբերի 22-ից (ներառյալ) և ավարտվում է 2026 թվականի նոյեմբերի 27-ին (ներառյալ)**: ***<u>Թեկնածուներն առաջադրվում են միայն Կենտրոնական տեղամասի միջոցով:</u>***
3. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների **<u>թեկնածուների</u>**

<u>քարոզչությունը</u> սկսվում է ***2026 թվականի նոյեմբերի 28-ից (ներառյալ) և ավարտվում է 2026 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը 17^{00}-ին***:

4. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող փաստաբանների նախնական ցուցակը տեղամասային բաշխվածությամբ Պալատի կողմից կհրապարակվի քվեարկությունից ոչ ուշ, քան երկու շաբաթ առաջ: Եթե փաստաբանը նախընտրում է քվեարկությանը մասնակցել այլ տեղամասում, քան նշված է նախնական ցուցակում, ապա քվեարկության օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ այդ մասին դիմում է ներկայացնում Պալատ՝ նշելով իր նախընտրած տեղամասը:
6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **<u>անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով</u>:**
7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:
8. «Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշման նախագիծը** ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվելու է **ընդհանուր ժողովի հրավիրված օրվանից ոչ ուշ, քան առնվազն 14 օր առաջ: Նախագծի վերաբերյալ առաջարկները կարող եք գրավոր ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ՝ նախագիծը Պալատի պաշտոնական կայքէջում հրապարակվելու օրվանից յոթնօրյա ժամկետում:**

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի **www.advocates.am** կայքէջից:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })